

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-06-2024 թ. որոշմամբ
«ՖԱՅԹԻՆԳ ԻՆՖԵՔՇՉ ԴԻՄԻՉԻՍ ԻՄԸՐՁԻՆԳ ՔԱՆԹՐԻՉ ԱՐՄԵՆԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՖԱՅԹԻՆԳ ԻՆՖԵՔՇՉ ԴԻՄԻՉԻՍ ԻՄԸՐՁԻՆԳ ՔԱՆԹՐԻՉ ԱՐՄԵՆԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՐԻՈԹ ԱՐՄԵՆԻԱ - ՄԵՆՅԱԿ 312	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01022	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2008-10-22	
1.5 ՀՎՀՀ-ն	02590813	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)91439598	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.fidex-online.org	
1.8 Էլեկտրոնային փոստը	artgev2002@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ԴԱՆԻԵԼ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
ԴԱՆԻԵԼ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
ՆԱՐԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ձեռնարկատիրական գործունեություն	25,308,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	94,336,383	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Ավիրատվություններ/ ավիրաբերությունները		
10.1 Ավիրատուները/ավիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Ավիրված/ավիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Շիրակի մարզի առողջապահական պիլոտային ծրագիր	86,867,954	
Երկրորդ կարծիք	2,326,127	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	89,194,081	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	89,194,081	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 27 էջերից:
 էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը



«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

**«ՖԱՅՈՒՆԳ ԻՆՖԵՐՇՉ ԴԻԶԻՍԻՍ ԻՆ ԻՄԸՐՉԻՆԳ ՔԱՆԹԻՉ
ԱՐՄԵՆԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ
ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2023թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ



**ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆԻՍ-2024թ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարության հայտարարությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւլ հաստատման պատասխանատվության վերաբերյալ	2
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2023Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԽԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Ֆայթինգ ինֆեքշն դիսիզիս ին իմրոջինգ քանթրիզ Արմենիա» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝
- ✚ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
 - ✚ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
 - ✚ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին,
 - ✚ Հիմնադրամի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ✚ Հիմնադրամում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ✚ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Հիմնադրամի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Հիմնադրամի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ✚ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ✚ Հիմնադրամի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- ✚ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2024թ. հունիսի 17-ին:

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝



Ն. Հայրապետյան

Ա. Հակոբյան

2024թ. հունիսի 17
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՌԴԻՏ» ՍՊԸ



ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՏ -02.08.2006թ, ՏՐՎԱԾ Է ԱՆԺԱՄԿԵՏ
«ԱՅՎԱՍՏԱՆԻ ԱՌԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱԳԱՀՆԵՐԻ ԳԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ 1 20 0440

ԱՆԿԱՆ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ֆայթինգ ինֆեքշն դիսիզիս ին իմքրջինգ քանթրիգ Արմենիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆայթինգ ինֆեքշն դիսիզիս ին իմքրջինգ քանթրիգ Արմենիա» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի բաղաբաղանդային ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԳ-Վարքագիր) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է:

Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- ✦ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✦ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✦ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✦ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✦ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

17 հունիսի 2024թ.

Գլխավոր տնօրեն՝

Սեդա Ղևորյան

Աուդիտոր՝

Համիկ Հանեսյան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Ֆայթինգ ինֆերշո դիսիգիս ին ինթրջինգ քանթրիզ Արմենիա» Հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	41	199
Ոչ նյութական ակտիվներ		-	-
Ոչ ընթացիկ հարկային ակտիվներ		-	-
Ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		41	199
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	725	5 282
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով		-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	35 978	24 288
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		36 703	29 570
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		36 744	29 769
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Զբաղիված շահույթ (ջնջված վնաս)		20 003	16 984
Պահուստային կապիտալ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		20 003	16 984
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	41	199
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		41	199
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		-	-
Պահուստներ աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	8	253	253
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	1 113	2 622
Շահութահարկի գծով պարտավորություններ		969	488
Եկամուտներին վերաբերող շնորհներ	7	14 365	9 223
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		16 700	12 586
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		36 744	29 769

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝



Ն. Հայրապետյան

Ա. Հակոբյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են «Ֆայթինգ ինֆերշո դիսիգիս ին ինթրջինգ քանթրիզ Արմենիա» Հիմնադրամի դեկավարության կողմից 2024թ. հունիսի 17-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Ըջ 9-26)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Ճայթինգ ինֆերշոլ դիստրիբյուշն ԿՊ» Հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Հասույթ	9	25 308	25 308
Վաճառքի ինքնարժեք	9	(3 805)	(3 986)
Համախառն շահույթ (վնաս)		21 503	21 322
Իրացման ծախսեր	10	(17 237)	(15 169)
Վարչական ծախսեր	11	(904)	194
աշխատավարձ և սոց վճար		-	-
Գործառնական այլ եկամուտ	12	16	21
Շնորհներից եկամուտ	13.1	89 352	138 260
Գործառնական այլ ծախսեր	12	(706)	(1 998)
Շնորհների գծով ծրագրային ծախսեր	13.1	(89 194)	(131 884)
Շարունակվող գործունեությունից այլ օգուտ/ (վնաս)	13	670	(6 376)
Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		3 500	4 370
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	14	(481)	(407)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	14	3 019	3 963
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		3 019	3 963



Տնօրեն՝ Ն. Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ՝ Ա. Հակոբյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթացիկ այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանուցագրությունների հետ մեկտեղ: (1ջ 9-26)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Ֆայթինգ ինֆրազոնա դիվիզիոն ին ինֆրազոնա քանթրիզ Վրմենիա» Հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Համարված բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն էկամուտ	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապի տալ	Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2022թ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	13 021	13 021
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	3 963	3 963
Շահաբաժիններ	-	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության ընդհանուր արդյունքը	-	-	-	-	-	-
Այլ համափարպակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	16 984	16 984
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	3 019	3 019
Շահաբաժիններ	-	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության ընդհանուր արդյունքը	-	-	-	-	-	-
Այլ համափարպակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	20 003	20 003

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝



Ն. Հարապետյան

Կ. Հակոբյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից շահաբաժնեգրությունների հետ մեկտեղ: (էջ 9-26)

Դրամական միջոցների մասին հաշվետվություն

«Ֆայթինգ ինֆերշո գրուպիս ին ինդյուստրիալ քանթրիզ Արմենիա» Հյուսիսային
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	24 288	87 546
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հանախորդներից ստացված դրամական միջոցներ	24 605	25 308
Ստացված դրամաշնորհներ	94 336	76 179
Այլ մուտքեր		1031
Ապրանքների ձեռքբերումից, աշխատանքների, ծառայությունների ստացումից	(32749)	(75557)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(48908)	(64167)
Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի	(16138)	(18753)
Այլ վճարումներ	(10 126)	(373)
Վճարված շահութահարկ		(550)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	11 020	(56 882)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	-	-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով		
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր	-	-
Ֆինանսական ակտիվների ձեռք բերում	-	-
Ստացված տոկոսներ	-	-
Վճարված տոկոսներ	-	-
Այլ վճարումներ	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից մուտքեր	-	-
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	-	-
Վճարված շահաբաժիններ	-	-
Ստացված տոկոսներ	-	-
Վճարված տոկոսներ	-	-
Այլ վճարումներ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ (նվազում)/ան	11 020	(56 882)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	670	(6376)
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	35 978	24 288



Տնօրեն Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ Ա. Հակոբյան

Դրամական միջոցների մասին հաշվետվությունը պատրաստվել է ընթացիկի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Ը-9-26)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ֆայթինգ ինֆեքշն Դիսիգիս Ին Իմբրջինգ Քանթրիգ Արմենիա» Հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամը

«Ֆայթինգ ինֆեքշն Դիսիգիս Ին Իմբրջինգ Քանթրիգ Արմենիա» հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») հիմնադրվել է Արգենտինայի քաղաքացի Դանիել Ստամբուլյանի կողմից: Հիմնադրամը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 22.10.2008 թվականին (գրանցման թիվ 222.160.01022 վկայական 03Ա081956):

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

✚ Հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ)

✚ Հիմնադրամի տնօրենը (Տնօրեն):

Խորհուրդը բաղկացած է չորս անդամներից:

Հիմնադրամի գործադիր տնօրենն է Նարինե Հայրապետյանը:

Հիմնադրամի աշխատակիցների ցուցակային թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 4 (չորս) մարդ:

1.2 Հիմնական գործունեությունը

Հիմնադրամի հիմնական նպատակներն են.

ա/ առողջապահության ոլորտում փորձառության կատարելագործում և առողջապահության հիմնախնդիրների կառավարման մակարդակի բարձրացում,

բ/ բնակչության առողջապահական ոլորտի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացում,

գ/ պետական և մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցություն՝ ուղղված առողջապահական կանխարգելիչ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

դ/ ուսանողների և մասնագետների փոխանակման հնարավորությունների ստեղծում,

ե/ Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության բարելավում՝ ինֆեկցիոն հիվանդությունների նվազեցման և կանխարգելման միջոցով,

զ/ առողջապահության ոլորտի կրթական ծրագրերի իրագործում՝ նախատեսված հանրության լայն շրջանակների համար, է/ առողջապահության ոլորտի կրթական ծրագրերի մշակում՝ մասնագետների /բուժաշխատողների բուժքույրերի և այլն/ համար,

ը/ առողջապահական հետազոտությունների իրականացում,

թ/ առողջապահական համակարգում բարելավումների իրականացում՝ սարքավորումների դեղամիջոցների պատվաստանյութերի մատակարարման և այլ նյութատեխնիկական աջակցության միջոցով:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, սպա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն: Հիմնադրամը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

Համաձայն ՖՀՄՍ-ի Հիմնադրամը ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին երկու հաշվետվություն: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Հիմնադրամը ներկայացնելու է երկու համադրելի ժամանակաշրջաններ միայն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման ֆինանսական հաշվետվություններում հոդվածների հետընթաց վերաներկայացման կամ ֆինանսական հաշվետվություններում հոդվածների վերադասակարգման դեպքերում:

2.5 Նոր և փոխոխված ՖՀՄՍ կիրառումը

Ընթացիկ տարում Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՀՀՄՍ-ի մեկնաբանման կոմիտեի կողմից:

3.Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հինգարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը ներկրման տուրքերը հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Խոշոր պահեստամասերը և ռեզերվային սարքավորումները որակվում են որպես հիմնական միջոցներ, երբ Հիմնադրամն ակնկալում է դրանք օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում: Նմանապես, եթե պահեստամասերը և սպասարկող սարքավորումները կարող են օգտագործվել միայն հիմնական միջոցի միավորի հետ կապակցված՝ դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոց:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները տեղանքի նախապատրաստման տեղակայման ծախսումները մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցների վաճառքից օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով մուտքերը հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը՝ Հիմնադրամի մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ վերանայվում է, եթե այդ ակտիվներից սպասվող տնտեսական օգուտների ստացման ակնկալվող մոդելի մեջ տեղի է ունեցել նշանակալի փոփոխություն:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

Դասի անվանումը	Չափման հիմունքը	Օգտակար ծառայություն հարկային	Օգտակար ծառայություն ֆինանսական	Մաշվածության հաշվարկման մեթոդը
Մեքենաներ և սարքավորումներ	սկզբնական արժեքով	5 տարի	5 տարի	գծային
Տրանսպորտային միջոցներ	սկզբնական արժեքով	5 տարի	5 տարի	գծային
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	սկզբնական արժեքով	1 տարի	1 տարի	գծային
Այլ հիմնական միջոցներ	սկզբնական արժեքով	5 տարի	5 տարի	գծային

Հողի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումների ամորտիզացիոն ժամկետն է 10 տարի:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը գնահատված արժեք է որը Հիմնադրամը ենթադրում է ստանալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետը լրանալուց հետո՝ ժամկետի վերջում ակնկալվող վաճառքից նվազեցնելով ակտիվի վաճառքի համար անհրաժեշտ գումարով:

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ամորտիզացիան դադարում է հետևյալ երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվին.

ա/ երբ ոչ նյութական ակտիվը դասակարգվում է, որպես վաճառքի համար նախատեսված և

բ/ երբ ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կիրառելով գծային մեթոդը: Գնահատված մնացորդային արժեքը օգտակար ծառայության ու ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և գնահատման փոփոխությունների ազդեցությունը հաշվառվում է առաջընթաց հիմունքով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվը ամորտիզացիայի ենթակա չէ:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր

1- 10 տարի:

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը գնահատում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հայտանիշների առկայությունը: Նման հայտանիշների առկայության դեպքում Հիմնադրամը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը իրենից ներկայացնում է վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի հաշվեկշռային արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնը: Նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումար և արժեզրկումից վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այնքանով, որքանով այն գերազանցում է նախկին վերագնահատման հավելանք սեփական կապիտալում:

Նախկինում ակտիվի գծով ճանաչված արժեզրկման վնասը հակադարձվում է, եթե ակտիվի օգտագործման արժեքի կամ վաճառքի զուտ գնի գնահատման փոփոխություն է տեղի ունեցել: Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Երբ հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Հիմնադրամը գնահատում է այն դրամատեսողծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է ակտիվը:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվները և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է առնվազն տարեկան և ցանկացած ժամանակ, երբ կա հայտանիշ, որ այդ ակտիվը կարող է արժեզրկվել:

3.3 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով կամ սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է: Ներդրումային գույքը ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ ներդրումային գույքը մշտապես հանվում է օգտագործումից և ապագա տնտեսական օգուտներ չեն սկանկալվում օտարումից:

3.4 Վարձակալված ակտիվներ

Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի փոքր է: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Երբ վարձակալական պայմանագրով վարձատուից Հիմնադրամին չեն փոխանցվում վարձակալվող գույքի հետ կապված էականորեն բոլոր ռիսկերը և հատույցները, ապա այն դիտվում է որպես գործառնական վարձակալություն:

ՖՀՄՍ 16 ստանդարտի համաձայն վարձակալը ճանաչում է վաճակալվող գույք հանդիսացող ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունը: Վաճակալվող գույք հանդիսացող ակտիվները դիտարկվում և մաշվում են այլ ոչ ֆինանսական ակտիվների նման, իսկ պարտավորության գծով հաշվարկվում է տոկոսագումար: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբում չափվում է վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք ապագա վարձավճարների ներկա արժեքով:

Հիմնադրամի բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության ժամկետը չեղյալ չհամարվող ժամկետ է, որի ընթացքում վարձակալը վարձակալում է ակտիվը հետագա այլ պայմանների հետ միասին, որոնց դեպքում վարձակալը հնարավորություն ունի շարունակել ակտիվի վարձակալությունը, երբ վարձակալությունը սկսելու ժամանակ արդեն պարզ է, որ վարձակալը օգտագործելու է իր հնարավորությունը: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

Գործառնական վարձակալության դեպքում, երբ Հիմնադրամը հանդես է գալիս որպես վարձատու՝ նախնական ուղղակի ծախսերը կապված գործառնական վարձակալության համար բանակցությունների հետ ավելացվում են վարձակալվող ակտիվի հաշվեկշռային արժեքին և վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են այնպես, ինչպես վարձակալությունից եկամուտը: Վարձակալությունից հոսքերը ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակաշրջանում, երբ դրանք վաստակվել են:

Նոր ՖՀՄՍ 16 -ը չունի նշանակալի ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.5 Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ օտարման խմբերը, որոնք ներառում են ակտիվներ և պարտավորություններ, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով: Այս պայմանը համարվում է բավարարված միայն այն ժամանակ, երբ վաճառքը խիստ հավանական է և ոչ ընթացիկ ակտիվը կամ օտարման խումբը մատչելի է անմիջական վաճառքի համար իր ներկա վիճակում: Հիմնադրամի ղեկավարությունը պետք է պարտավորված լինի վաճառելու ակտիվը և պետք է ակնկալվի, որ դասակարգման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտված վաճառք ճանաչելու պայմաններին:

Անմիջականորեն նախքան դասակարգումը ակտիվները կամ օտարման խմբերը վերաչափվում են համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այնուհետև որպես վաճառքի համար դասակարգված ակտիվները կամ օտարման խմբերը չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումներ նվազագույնով:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ընդհատված գործունեությունից եկամուտները և ծախսերը ներկայացվում են շարունակական գործունեության եկամուտներից և ծախսերից առանձին՝ մինչև շահութահարկից հետո գուտ գումարի մակարդակը:

Վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով մաշվածություն կամ ամորտիզացիա չի հաշվարկվում:

3.6 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով, և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 393,57 դրամ, 1 Եվրո = 429,54 դրամ, 1 ռուբլ = 5,77 դրամ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 404,79 դրամ, 1 Եվրո = 447,90 դրամ, 1 ռուբլ = 4,5 դրամ:

3.7 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.8 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարյան և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք առաջին ելք» բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք ցանկացած իջեցման գումար և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման գուտ արժեքի աճից ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

3.9 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են օրինակ վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.10 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարները և գնահատված նվազեցումները:

Ապրանքների վանառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ Հիմնադրամը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից և ո՛չ էլ վաճառված

ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում, ինչպես նաև երբ հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ և գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը, հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ, հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

3.11 Հարկեր

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների չօգտագործած հարկային վնասների և զեղչերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այնևս հավանական չէ որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք նախատեսվում են կիրառել այն ժամանակաշրջանում, երբ ակտիվը կիրացվի կամ պարտավորությունը կմարվի՝ հիմք ընդունելով հարկերի դրույքաչափերը և հարկային օրենքները, որոնք գործում են հաշվետու ժամանակաշրջանում:

Շահույթից կամ վնասից դուրս ճանաչված հողվածների վերաբերող հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս: Հետաձգված հարկային հողվածները ճանաչվում են՝ հիմքում ընկած գործարքներից կախված կամ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝ նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվները իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Իրացման հարկեր (անուղղակի հարկեր)

Հասույթը ծախսերը և ակտիվները ճանաչվում են գուտ իրացման հարկերից՝ բացառությամբ.

(ա) երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հողված,

(բ) դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են վճարման ենթակա չեն չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- (ա) ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- (բ) փոխառություններ դեբիտորական պարտքեր,
- (գ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- (դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 16-ում:

(ա) Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Հիմնադրամի կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ գնվելու նպատակով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման դասակարգվում են այս կատեգորիայում:

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական ակտիվները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, երբ ՀՀՄՍ 39-ի սահմանած չափանիշները բավարարված են Հիմնադրամը չի նախատեսել որևէ ֆինանսական ակտիվ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի գույտ փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես ֆինանսական ծախս կամ ֆինանսական եկամուտ:

(բ) Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև դրամարկղում և բանկերում մնացորդները:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքը կման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեքը կման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեքը կման է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական դուրս են գրվում:

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները

և դրամական միջոցները ճանապարհին:

(գ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Հիմնադրամի ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են անկախվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների անկախվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ապահանջում

Ֆինանսական ակտիվը ապահանջվում է, երբ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պայմանագրային իրավունքի ժամկետն ավարտված է կամ երբ Հիմնադրամը մեկ այլ կազմակերպության փոխանցել է ֆինանսական ակտիվը և դրա սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական ակտիվի ամբողջական ապահանջման ժամանակ ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված կամ ստացվելիք հատուցման գումարի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված կուտակային օգուտի կամ կորստի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը բանկային օվերդրաֆտները վարկերը և փոխառությունները ֆինանսական երաշխավորության պայմանագրերը և ածանցյալ ֆինանսական գործիքները: Հիմնադրամը որոշում է ֆինանսական պարտավորությունների դասը սկզբնական ճանաչման ժամանակ: Հիմնադրամի ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 15-ում:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի և փոխառությունների պարագայում՝ ներառյալ ուղղակի վերագրելի գործարքի ծախսումները: Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը կախված է ստորև ներկայացված դասակարգումից՝

(ա) ֆինանսական պարտավորություններ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները և այն ֆինանսական պարտավորությունները, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(բ) Այլ ֆինանսական պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ապահանջում

Ֆինանսական պարտավորությունը ապահանջվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում, կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը: Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա պետք է հին պարտավորությունը ապահանջել և նոր պարտավորությունը ճանաչել՝ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը՝ ձևակերպելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այն և միայն այն դեպքում, երբ գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմունքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

3.13 Կանխավճարներ

Կանխավճարները հաշվեկշռում ընդգրկվում են արժեզրկման պահուստով նվազեցման արժեքով: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ այն պարագայում, երբ կանխավճարին վերաբերվող ապրանքները կամ ծառայությունները նախատեսվում է ձեռք բերել մեկ տարի հետո, կամ երբ կանխավճարները վերաբերում են ակտիվներին, որոնք դասակարգվում են որպես ոչ ընթացիկ սկզբնական ճանաչման ժամանակ: Ակտիվի ձեռքբերման համար կանխավճարները հաշվեզրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին այն ժամանակ, երբ Հիմնադրամին է անցնում ակտիվի տիրապետումը և հնարավոր է դառնում, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ: Այլ կանխավճարները դուրս են գրվում շահույթ կամ վնաս կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները ձեռք բերելու պահին: Եթե կան հայտանիշներ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում և համապատասխան արժեզրկման վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.14 Պահուստներ պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Հիմնադրամը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ըստ ակնկալության կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Ձեռքման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

3.15 Պետական շնորհներ

Հիմնադրամը կիրառում է ստանդարտը անալոգիայով:

Պետական շնորհները ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներինայն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.16 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված որպեսզի պատրաստ լինեն՝ ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար) ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին, մինչև որ ակտիվներն ըստ էության պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից ստացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

3.17 Կարևոր հաշվապահական գնահատումներ դատողություններ և ենթադրություններ

Ենթադրությունների և դատողությունների գնահատում

ՖՀՄՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ակտիվների պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի համար եկամուտների ու ծախսերի մեծության վրա:

Հիմնադրամը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքներին, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ: Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ ցուցանիշների վրա ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ նման գործոնները, ինչպիսիք են գործառնական կամ տեխնիկական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան:

Հիմնադրամի ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն, ապա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է Հիմնադրամի ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Եթե պայմանները փոփոխվում են և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքը ավելացել է, ապա արժեզրկման պահուստը ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ղեքիտորական պարտքի համար արժեզրկման պահուստը հիմնված է յուրաքանչյուր հաճախորդի հաշվի հավաքագրելիության գնահատականի վրա: Եթե կա հիմնական հաճախորդի վարկունակության նվազում, կամ էթե իրական ժամկետանց գումարները ավելի շատ են, քան կանխատեսումները, իրական ղեքիտորական պարտքերը կարող են տարբերվել այդ գնահատականներից:

Եթե ղեկավարությունը որոշում է, որ անհատապես գնահատվող ղեքիտորական պարտքերի գծով լինի դա նշանակալի թե՛ ոչ ոչ մի օբյեկտիվ հայտանիշ արժեզրկման համար չկա, այն ներառվում է ղեքիտորական պարտքերում նման վարկային ռիսկի հայտանիշներ ունեցող ղեքիտորական պարտքերի խմբում և կատարում է դրանց արժեզրկման խմբային գնահատում:

Խմբային արժեզրկման գնահատման նպատակով ղեքիտորական պարտքերը խմբավորվում են միևնույն ռիսկի հայտանիշների հիման վրա: Այդ հայտանիշները վերաբերվում են խմբերի համար ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատմանը, որը ցույց է տալիս գնահատվող ակտիվի պայմանագրային պայմաններին համապատասխան գումարների վճարումները կատարելու ուղղությամբ ղեքիտորի հնարավորությունը:

Արժեզրկման խմբային գնահատման ենթակա ղեքիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով ղեկավարության փորձի հիման վրա, որը հետևանք է անցյալ ժամանակաշրջանի վնասի դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման հաջողության:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմաններ ազդեցությունը արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավատու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան գնահատումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Ֆինանսական գործիքի իրական արժեք

Այն դեպքում երբ ֆինանսական հաշվետվություններում հաշվառվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը դուրս չի բերվում ակտիվ շուկայից, նրանց իրական արժեքը որոշվում է գնահատման մեթոդների օգնությամբ՝ ներառյալ դրամական հոսքերի զեղչման մոդելը: Մուտքային ցուցանիշները այս մոդելներում վերցվում են դիտարկելի շուկաներից, որտեղ դա հնարավոր է, իսկ որտեղ հնարավոր չէ՝ դատողությունների որոշակի աստիճան է անհրաժեշտ իրական արժեքները գնահատելու համար: Դատողությունները վերաբերում են այնպիսի մուտքային տվյալներին, ինչպիսիք են իրացվելիության ռիսկը, վարկային ռիսկը և փոփոխականությունը: Այս գործոնների վերաբերյալ ենթադրությունների փոփոխությունները կարող են ազդել ֆինանսական գործիքների հաշվառվող իրական արժեքի վրա:

4. Հիմնական միջոցներ

	Մեքենա ու սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք տնտեսական գույք գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
2022թ հունվարի 1-ի դրությամբ	5 499	-	-	-	5 499
Ավելացումներ	553	-	-	-	553
Նվազեցումներ	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-	-
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6 052	-	-	-	6 052
Ավելացումներ	-	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6 052	-	-	-	6 052
<i>Կուտակված մաշվածություն</i>					
2022թ հունվարի 1-ի դրությամբ	5 418	-	-	-	5 418
Տարվա ծախս	435	-	-	-	435
Նվազեցումներ	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-	-
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	5 853	-	-	-	5 853
Տարվա ծախս	158	-	-	-	158
Նվազեցումներ	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-
Վերագնահատում/արժեզրկում	-	-	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6 011	-	-	-	6 011
<i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>					
2022թ հունվարի 1-ի դրությամբ	81	-	-	-	81
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	199	-	-	-	199
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	41	-	-	-	41

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի միջոցներից 6011 հազ.դր և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միջոցներից 5339 հազ դր. չունեն հաշվեկշռային արժեք:

5. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	<u>2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	703	-
Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	-	-
Այլ դեբիտորական պարտք	-	-
առհաշիվ տրված կանխավճարներ	15	3 211
կանխավճարներ աշխատավարձի գծով	1	-
Կասկածելի պարտքերի գծով պահուստ	-	-
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքերում ներառված ընթացիկ ֆինանսական ակտիվներ	719	3 211
Տրված ընթացիկ կանխավճարներ	6	2 071
Դեբիտորական պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	-	-
Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով	-	-
Փոխհատուցվող անուղղակի հարկեր	-	-
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	725	5 282

6. Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	<u>2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Բանկային մնացորդ	35 978	24 288
Բանկային օվերդրաֆտ	-	-
Կանխիկ միջոցներ	-	-
Ընդամենը	35 978	24 288

7. Պետական շնորհներ

Ակախվելի վերաբերող շնորհներ

	<u>31.12.2023թ</u>	<u>31.12.2022</u>
Հունվարի 1-ի դրությամբ	199	81
Տարվա ընթացքում ստացված	-	-
Եկամուտներին վերաբերվող շնորհից տեղափոխում	-	553
ակտիվներին վերաբերվող շնորհ	-	-
Շնորհի վերադարձ	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին	(158)	(435)
հաշվետվությունում հաշվառված	41	199
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	41	199

Եկամուտներին վերաբերող շնորհներ

	<u>31.12.2023թ</u>	<u>31.12.2022թ</u>
Հունվարի 1-ի դրությամբ	9 223	71 423
Տարվա ընթացքում ստացված	94 336	76 178
Եկամուտներին վերաբերվող շնորհից տեղափոխում	-	(553)
ակտիվներին վերաբերվող շնորհ	-	-
Շնորհի վերադարձ	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին	(89 194)	(137 825)
հաշվետվությունում հաշվառված	14 365	9 223
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	14 365	9 223

8. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	<u>2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Կրեդիտորական պարտք գնումների գծով	316	840
Կրեդիտորական պարտքեր ստացված հիմնական միջոցների գծով	-	-
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ պարտքերում ընդգրկված ֆինանսական պարտավորություններ	316	840
Ստացված կանխավճարներ	-	-
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	610	1 636
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով	157	145
Պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	30	1
Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով	-	-
Այլ ընթացիկ պարտավորություններ	-	-
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1 113	2 622
Պարտքեր շահութահարկի գծով	969	488
Պահուստներ աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	253	253

9. Հասույթ, վաճառքի ինքնարժեք
Հասույթ

Արտադրանքի վաճառքից
 Ապրանքների վաճառքից
 Աշխատանքների կատարումից
 Ճառայությունների իրացումից
Ընդամենը

2023թ	2022թ
-	-
-	-
-	-
25 308	25 308
25 308	25 308

Վաճառքի ինքնարժեք

Արտադրանքի վաճառքից
 Ապրանքների վաճառքից
 Աշխատանքների կատարումից
 Ճառայությունների իրացումից
Ընդամենը

2023թ	2022թ
-	-
-	-
-	-
(3 805)	(3 986)
(3 805)	(3 986)

10. Իրացման ծախսեր

Աշխատավարձ և սոց վճար
 Մաշվածություն և ամորտիզացիա
 Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների
 փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման
 ծախսեր
 Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և
 ապահովության ծախսեր
 Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն
 Մարկետինգի և գովազդի ծախսեր
 Իրացման այլ ծախսեր

2023թ	2022թ
(17 237)	(15 169)
-	-
-	-
-	-
-	-
-	-
-	-
-	-
-	-
(17 237)	(15 169)

11. Վարչական ծախսեր

Աշխատավարձ
 Աշխատավարձի պահուստաֆոնդ
 Մաշվածություն և ամորտիզացիա
 Գործուղման և ներկայացուցչական
 Փոստի, հեռահաղորդակցության
 Գրասենյակային, կոմունալ
 Բանկային, աուդիտորական և խորհրդատվական
 Այլ

2023թ	2022թ
(633)	-
-	370
(158)	-
-	-
-	-
(24)	(141)
(50)	(35)
(39)	-
(904)	194

12. Գործառնական այլ եկամուտներ և ծախսեր
Այլ եկամուտներ

Այլ պաշարների օտարումից եկամուտներ
 Պաշարների արժեքի փոփոխությունից
 եկամուտներ, դեբիտորական պարտքերի կորուստների
 հակադարձումից եկամուտներ
 Գործառնական վարձակալությունից եկամուտներ
 Եկամուտներ տույժերից, տուգանքներից
 Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ
 Գործառնական այլ եկամուտներ

2023թ	2022թ
-	-
-	-
-	-
-	-
-	-
-	-
16	21
16	21

Այլ ծախսեր

Այլ պաշարների օտարումից ծախսեր
 Պաշարների արժեքի փոփոխությունից ծախսեր, վանառքների գծով
 դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսեր,
 երաշխիքային սպասարկման եւ վերանորոգման գծով ծախսեր
 Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների
 մաշվածության ծախսեր
 Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր
 անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրումից
 Արժեքների պակասորդներ եւ փչացումից կորուստներ
 Հետազոտության եւ մշակման ծախսեր
 Հիմնական միջոցների լուծարման ծախսեր
 Գործառնական այլ ծախսեր

	2023թ	2022թ
	-	-
	-	-
	-	-
	-	-
	-	-
	-	-
	-	-
	-	-
	(706)	(1 998)
	(706)	(1 998)

13. Շարունակվող գործունեության այլ եկամուտներ և ծախսեր
Շարունակվող գործունեության այլ եկամուտներ

Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ
 Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ
 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների եւ ոչ նյութական ակտիվների
 վերաչափումից օգուտներ
 Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ
 Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից եւ
 արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից օգուտներ
 Ֆինանսական ներդրումներից եկամուտներ
 Այլ եկամուտներ

	2023թ	2022թ
	-	-
	-	-
	-	-
	2 531	12 476
	-	-
	-	-
	-	-
	2 531	12 476

Շարունակվող գործունեության այլ ծախսեր

Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր
 Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր
 Ոչ ընթացիկ նյութական ակտիվների եւ ոչ նյութական ակտիվների
 վերաչափումից կորուստներ
 Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ
 Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից եւ
 արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից կորուստներ
 Ֆինանսական ծախսեր
 Անհատույց տրված ակտիվների և եկամուտների գծով ծախսեր
 Այլ ծախսեր

	-	-
	-	-
	-	-
	(1 861)	(18 852)
	-	-
	-	-
	-	-
	-	-
	(1 861)	(18 852)
	670	(6 376)

Բնդամենը շարունակվող գործունեությունից այլ օգուտ/ (վնաս)

13.1 Ծնորհներից եւ անհատույց ստացումներից եկամուտներ
 13.1 Անհատույց տրված ակտիվների և եկամուտների գծով ծախսեր

	89 352	138 260
	89194	131884

14. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներ

Ընթացիկ շահութահարկ`
 Ընթացիկ շահութահարկի գծով ծախս
 Հետաձգված հարկեր
 Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում
 ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)

	2023թ	2022թ
	481	407
	481	407
	-	-
	-	-
	481	407

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	2023թ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Հաշվապահական շահույթ / (վնաս) մինչև շահութահարկով հարկումը	3 500		4 370	-
ՀՀ շահութահարկի պարտադիր 18% (2023թ.՝ 18% 2022թ.) դրույքաչափով հաշվարկված շահութահարկ (Չհարկվող)/չնվագեցվող հողվածներ, գույտ	(481) 962	18 0,3	(407) 3 963	18 0,9
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	481	18,3	3 556	18,9

15. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

Ֆինանսական գործիքների կառուցվածքները

Ֆինանսական ակտիվներ

	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկում և բանկերում	35 978	24 288
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	-	-
Այլ դեբիտորական պարտք	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-	-
	35 978	24 288

Ֆինանսական պարտավորություններ

	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	316	840
Վարկեր և փոխառություններ	-	-
	316	840

16. Ֆինանսական ռիսկի կառավարման խնդիրներ և դրա ուղղության քաղաքականություն

Հիմնադրամը կառավարում է իր կապիտալն այնպես, որ կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում: Հիմնադրամի հիմնական ֆինանսական պարտավորությունները իրենց մեջ ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Այդ ֆինանսական պարտավորությունների հիմնական խնդիրն է Հիմնադրամի գործունեության ֆինանսավորումը: Հիմնադրամը ունի դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ, որոնք առաջանում են իր գործառնական գործունեության ընթացքում:

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթակա է շուկայական պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Հիմնադրամի ղեկավարությունը հետևում է այդ ռիսկերին և պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի ներդրման, ինչպես նաև հետագա փոփոխման համար:

Շուկայական ռիսկի կառավարում

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով և ներառում է ռիսկերի հետևյալ տեսակները՝ տոկոսադրույքի ռիսկարտարժույթային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, ավանդները, վաճառքի համար մատչելի ներդրումները և ածանցյալ ֆինանսական գործիքները: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ընդունելի սահմաններում այդ ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամատարբության օպտիմալացումը:

ա/ Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը իրենից ներկայացնում է ռիսկը այն բանի, որ ֆինանսական գործիքների իրական արժեքը,

կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական տոկոսադրույքների փոփոխության պատճառով: Հիմնադրամը կարող է ենթակա լինել շուկայական տոկոսադրույքների փոփոխության ռիսկին իր՝ լողացող տոկոսադրույքով երկարաժամկետ պարտավորությունների մասով: Հիմնադրամը ղեկավարում է իր տոկոսային ռիսկը լողացող և ֆիքսված տոկոսադրույքով վարկերի և փոխառությունների հավասարակշռված պորտֆելի օգնությամբ: Հիմնադրամի քաղաքականության համաձայն փոխառությունների գերակշիռ մասը պետք է ունենան հաստատուն տոկոսադրույքներ:

Ներկայումս Հիմնադրամը չունի տոկոսային եկամուտ ձևավորող ֆինանսական ակտիվներ հետևաբար Հիմնադրամի եկամուտները և դրամական ներհոսքերը մեծապես անկախ են շուկայում տոկոսադրույքների փոփոխություններից:

բ/ Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ Հիմնադրամը իրականացնում է արտարժույթով գործարքներ: Այն վերաբերում է արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությանը Հիմնադրամի ֆինանսական գործիքների իրական արժեքների կամ դրամական հոսքերի վրա: Ներկայումս Հիմնադրամը չունի արտարժույթային ռիսկի ենթակա նշանակալի ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Պարտքային ռիսկի կառավարում

Պարտքային ռիսկը իրենից ներկայացնում է գործընկերոջ կողմից ֆինանսական գործիքներով կամ հաճախորդի հետ կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելը, որը կհանգեցնի ֆինանսական վնասի: Հիմնադրամը ենթակա է պարտքային ռիսկի կապված իր գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի) և ֆինանսական գործունեության մասով (բանկերում և ֆինանսական այլ հաստատություններում ավանդներ արտարժույթային գործարքներ և այլ ֆինանսական գործիքներ):

Հաճախորդների գծով պարտքային ռիսկը կառավարվում է յուրաքանչյուր բիզնես միավորի կողմից հաճախորդների պարտքային ռիսկի կառավարման վերահսկողությանը համապատասխան: Հաճախորդի վարկունակությունը գնահատվում է անհատական վարկային լիմիտների հիման վրա, որոնք սահմանվում են հաճախորդների վարկունակությունից ելնելով: Հաճախորդների դեբիտորական պարտքերը պարբերաբար ենթարկվում են մոնիթորինգի: Հիմնադրամը օգտագործում է հրապարակայնորեն մատչելի ֆինանսական տեղեկատվություն և վաճառքների գծով իր սեփական վիճակագրական տվյալները՝ վարկանշելու համար իր խոշոր գնորդներին: Խոշոր հաճախորդների գծով արժեզրկման նկատմամբ պահանջները վերլուծվում են յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար անհատական հիմունքների վրա: Ոչ խոշոր դեբիտորական պարտքերը դասվում են նման խմբերում և ենթարկվում խմբային արժեզրկման գնահատման: Հաշվարկները հիմնվում են իրականում տեղի ունեցած պատմական տվյալների հիման վրա: Պարտքային ռիսկի շարունակական գնահատումը կատարվում է դեբիտորների ֆինանսական վիճակի հիման վրա և համապատասխան դեպքերում ձեռք է բերվում հնարավոր պարտքային կորուստների գծով ապահովագրություն:

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները իրականացնելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Հիմնադրամի համբավը վտանգի ենթարկելու:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

17. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ

Գործառնական վարձակալության գծով պայտավորվածություններ

Հիմնադրամը իր գործունեությունը ծավալելու համար վարձակալության է վերցրել ոչ բնակելի տարածք՝ 230600 հազար դրամ ամսական ընդհանուր գումարով մեկ տարի ժամկետով:

Իրափական միջավայր

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դեմ կամ Հիմնադրամի կողմից հարուցված դատական հայցեր չկան:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Հիմնադրամը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Հիմնադրամի գործարքների և

գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով որի արդյունքում հնարավոր է որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության՝ հարկային մարմնի կողմից հարկերի ստուգման համար հաշվետու տարվան նախորդող չորս տարիները բաց են:

Հիմնադրամը կարծում է, որ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների մեկնաբանությունները և Հիմնադրամի հարկային արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

18. Կապակցված կողմերի բացահայտում

Հիմնադրամի հիմնադիրն է Դանիել Ստամբուլյանը:

Հաշվետու տարում Հիմնադրամը ստացել է դրամաշնորհ եկամուտներին վերագրվող 76179.0 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Հանգուցային կառավարչական անձնակազմի՝ տնօրենի աշխատավարձը 2023թ. կազմել է 26,060,0 հազար ՀՀ դրամ, իսկ 2022թ. կազմել է 28976,0 հազար ՀՀ դրամ:

Տնօրեն՝
Գլխավոր հաշվապահ՝



Հայրապետյան
Է. Հակոբյան